

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա.  
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ  
ՄԱՍԻՆ**

13) Ինչո՞ւ Յիսուս մկրտուեցաւ:  
Չե՞ որ ան աղամական մեղք չու-  
ներ:

Յիսուս մկրտուեցաւ ոչ թէ աղա-  
մական մեղքէն մաքրուելու համար,  
այլ՝ շեշտելու Ա. մկրտութեան անհրա-  
ժեշտութիւնը մարդու կեանքին մէջ:  
Քանի ան կատարեալ մարդ է ամէն  
ինչով, բացի մեղքէն: Յիսուս մկրտը-  
ւելով եւ համայն մարդկութեան մեղ-  
քերը իր վրայ առնելով ցոյց տուաւ,  
որ աշխարհ եկած է մարդկութիւնը  
փրկելու համար՝ կատարելով Աս-  
տուծմէ մարդուն տրուած բոլոր  
պատուիրանները: Հայ եկեղեցւոյ  
վարդապետներն ու իմաստուն հայ-  
րապետները աւետարանական այս  
հատուածին համար զուգահեռներ կը  
գծեն մեր նախածնորդի՝ առաջին Ա-  
ղամի եւ երկրորդ Աղամ՝ Քրիստոսի  
միջեւ: Ինչպէս, որ երեսնամեայ ա-  
ռաջին Աղամը ստեղծուեցաւ եւ մե-  
ղանչեց Աստուծոյ դէմ, նոյն հասա-  
կին երկրորդ Աղամը՝ մեր Տէրը,  
մկրտուեցաւ եւ խորտակեց վիշապ  
սատանային գլուխը եւ մեզի փրկու-  
թին շնորհեց: Յորդանանի ջուրերուն  
մէջ Փրկիչին ընկղմելով, երկինքն ու  
երկիրը նոր եղան, մաքրուեցան բո-  
լոր ջուրերը, աղամորդիները ազա-  
տագրելով Աղամի ամէծքէն եւ  
դարձնելով նոր մարդ՝ Քրիստոսվ:

**ԱԴԱՆԴԱՒՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՆ-ՕՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ  
8-ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՋ  
ԳԱԼՈՒՍԸ**

Եհովայի վկաները Քրիստոսի երկրորդ  
գալուստին մասին կ'ըսեն, թէ Քրիստոս իր  
մարմինով եւ տեսանելի ձեւով պիտի չգայ,  
այլ իր գալը միայն հոգեւոր «Անրկայու-  
թիւն» մը, իրենց իսկ բառերով՝ «Երկրորդ  
Անրկայութիւն» մը պիտի ըլլայ, որ արդէն  
իսկ եղած է:

Սակայն Աստուածաշունչը այդպիսի  
շինծու տեսութեան մը հաւանութիւն չի  
տար: Ընդհակառակը, յայտնապէս կ'ըսէ՝  
թէ երկրորդ գալուստը պիտի ըլլայ պար-  
զօրքն տեսանելի: Քրիստոս այդ մասին  
ըսաւ. «Եւ շուտ մը, այն նեղութեան օրերէն  
ետք, ... մարդու Որդիին նշանը պիտի երեւի  
երկինքի մէջ, եւ այն ատեն երկրի բոլոր  
ազգերը կոծ պիտի ընեն, եւ ՊիՏԻ ՏԵՄՆԵՆ  
մարդու Որդին՝ երկինքի ամպերուն վրայ  
եկած, գօրութեամբ ու մեծ փառքով» (Մտք.  
24.29-30):

Համբարձման լեռան վրայ, մինչ ա-  
շակերտները իրենց սեւեռաբիր հայեացքը  
ուղղած էին երկինք՝ ուր պահ մը առաջ  
բարձրացեր էր իրենց Տէրը, ահա սպիտակ  
զգեստներով երկու հրեշտակներ իրենց  
մօտ կանգնեցան եւ ըսին...

**Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերքը ա-  
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-  
վուրդին, եկեղեցիներու բանկային  
մօտ: Նաև՝ Facebook-ի վրայ փանուել  
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա  
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-  
դամագրուելու համար:**

**ՀԱՍՑԵ.**

**ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐՁ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,**

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - [facebook-h.t9 jerak ՃՐԱԳ թերք](http://facebook-h.t9 jerak ՃՐԱԳ թերք)



ԲՈՒ ԽՈՍՔԻ Խ ՈՅԵՐՈՒՄ ՑՈՎ Է ՈՒ Խ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ԼՈՅ  
(Ա. 119.105)

ԺԱ. ՏՄՐԻ

Կիրակի, 8 ՅՈՒՆԻ 2018

ԹԻՒ 27

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

**Իմաս. 7.25-8.4: Զք. 14.16-21: Ա.Յի 1.1-7**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՆ ՄԱՏԹԵՈՍԻ 16.13-17.13**

**ՎԱՐԴԱՎԱՌ**

**ՏԸՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ**

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ բող  
ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս զայս: Որովհետեւ ով ուզէ իր անձը  
փրկել՝ պիտի կորսանցնէ զայս, եւ ով որ ինձի համար կորսանցնէ իր անձը՝ պիտի գտնէ  
զայս: Ի՞նչ օգուտ, երք մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսանցնէ,  
որովհետեւ որեւէ բանով չի կրնար իր կեանքը եւ առնել: Արդարեւ, երք մարդու  
Որդին զայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիրին իր գործերուն  
համաձայն հասուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք  
պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն մարդու Որդին որ կու զայ իր բազաւորութեամք»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոս, Յակովը եւ Յովհաննես  
եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ  
անոնց դիմաց: Իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հազուատները լոյսի նման  
ճերմակ եղան: Եւ ահա երեցաւ Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ:

Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ք, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինեն,  
մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ Միար Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա  
լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Այս է  
իմ սիրեւի Որդիս որ հանեցայ. անոր մտիկ լրէք»: Երք աշակերտները լսեցին  
ասիկա, սարսափահար երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով դպաւ անոնց  
եւ ըսաւ. «Ոտքի եղէք, մի՛ վախճաք»: Աշակերտները իրենց աշքերը վեր  
բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնեին, Յիսուս պատուիրեց անոնց ըսելով. «Մինչեւ որ  
մարդու Որդին մեռեներէն յարութիւն չանեն, ճեր տեսածը ունէ մէկուն մի՛ պատմէք»:  
Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ւ Օրենքի ուսուցիչները  
կ'ըսէն, թէ նախ Եղիան պէտք է զայ»:

Յիսուս պատասխանեց. «Ճիշտ է, Եղիան նախ զալով՝ պիտի պատրաստէ ամէն  
ինչ: Բայց զիստէք, որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ  
անոր հետ վարուեցան ինչպէս: Նոյնպէս ալ մարդու Որդին պիտի  
չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն, աշակերտները հասկցան, թէ Յովհաննես  
Մկրտիչի մասին կը խօսէր ան:

# ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ՝ ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը ժողովրդական այն անունն է, որ կը տրուի Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի նաև երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը, ամէն տնօրինական տօներու նման, կը վերաբերի Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը: Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւալուն իր առաքեալներէն երեքին՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լերան վրայ: Ահա թէ ինչ ձեւով կը ներկայացնի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան դրուագը Մատթեոսի աւետարանին մէջ.

«Վեց օր եսք, Յիսուս իր հետ առա Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ներմակ եղան:

Եւ ահա երեցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

- Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես, երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսը Եղիային համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց գիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հանցայ, անոր մտիկ ըրե՛լ» (Մտ 17.1-6):

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնին վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

Կ'ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկներ, ծերեր, այրեր ու կիներ տուներու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւներուն եւ առուներուն մօտ կուժերով իրարու վրայ ջուր կը թափեն եւ զիրար ջուրերուն մէջ կը միրնեն: Այս աւանդութիւնը նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհի մէջ: Աւանդապատում

### Հայոցում պատստիսն բաժին

#### Ինչո՞ւ եկեղեցւոյ մէջ մոմ կը վառենք:

Մոմ վառելը շատ հին սովորութիւն է: Անշուշտ, հին ժամանակներուն, մոմի գործածութիւնը անհրաժեշտ էր լուսաւորութեան համար, մանաւանդ երբ արարողութիւնները տեղի կ'ունենային գիշերները: Ժամանակի ընթացքին երբ մոմի լոյսը փոխարինուեցաւ նրագներով եւ ապա ելետրականութեամբ, մոմի գործածութիւնը մնաց:

Սուրբերու նկարներուն առջեւ մոմ վառելը զոհ մատուցանելու իմաստ ունի: Ժամանակին հին կտակարանին մէջ, մարդիկ իրենց մեղերը բաւելու համար Աստուծոյ կենդանական զոհ կը մատուցանէին, զոհին արիւնը հեղելով: Քրիստոնէական շրջանին հաւատացեալներ զոհ մատուցանելէ դադրեցան, որովհետեւ Քրիստոս ինք եղաւ միակ եւ գիշաւոր Զոհը, որ խաչին վրայ զոհուեցաւ եւ իր արիւնը հեղեց մարդոց մեղերուն համար եւ Ս. Պատարագը յիշատակումն է խաչին վրայ Քրիստոսի զոհագործուելու:

Ներկայիս, մոմը կը խորհրդանշէ անարիւն եւ բանաւոր զոհ, փոխան հին կտակարանի կենդանական արեան հեղմամբ զոհերուն:

## ՄԵՐ ՅԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

#### ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մենք եւս Յիսուսի հետ լերան գլուխը ելլենք եւ ամսպաչու ճամբէն Անոր հետեւելով Աստուծոյ մօտ ըլլանք: Թօթափենք մեր վրայէն քունն ու ծովութիւնը, որոնք թշուառութեան մայր են եւ առաքինի բոլոր գործերուն վնասակար: Հեռացնենք մեր սիրտէն հեշտասիրութիւնն ու ազահութիւնը, որ կրապաշտութիւնն է, եւ բոլոր չարութիւնները, որպէսզի կարենանք տեսնել Յիսուսը ոչ թէ Թափօր լերան վրայ, այլ երկինքի արքայութեան մէջ: Հետեւաբար Անոր բոլոր առաքինութիւններով զարդարուած, առնենք հաւատքի վահանը եւ Հոգիոյն սուր՝ Աստուծոյ խօսքը, մեր գլուխը դնենք փրկութեան սաղաւարտ՝ խաչի նշանը, հազմինք արդարութեան զրահը, ամրացենք մեռութերը Աւետարանի խաղաղութեամբ եւ այս բոլորին վրայ ունենանք սէրը, որ կատարելութեան զարդն է, որպէսզի Քրիստոսի խաղաղութիւնը մեր սիրտերուն մէջ հաստատուի:

Չմնանք մեր տկարութեան մէջ, ոչ այս կեանքով զրադինք: Զգենք ամէն ինչ, որ մեր շուրջն է: Լրենք տկար մարմինը եւ լսենք Քրիստոսի ձայնը, որ մեզ կը կանչէ ոչ թէ թափօր լեռ, այլ երկինք՝ ըսելով. «Օ՛ն, եկէք երթանք հոսկէ»:

#### ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐԸ

### ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՈՒՐԱՏՈՒ

#### ՂԱՏԴ ՅԱՆՁՆԵ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Եթէ մեղքի բռնակալութեան ենթակայ ես եւ կ'ուզես ձերբազատի անոր բռնակալութենէն՝ դատդ յանձնէն Յիսուսի եւ ան ֆեզ պիտի ազատագրէ մեղքի ստրկութենէն: Եթէ մարդիկ կ'անիրաւեն ու կ'իրաւազրին ֆեզ՝ դատդ յանձնէն Յիսուսի, որովհետեւ ան է որ իրաւումք կ'ընէ իրաւազրկուածին: Եթէ սուտի ու բամբասանքի զոհ գացած ես՝ դատդ յանձնէն Յիսուսի, որովհետեւ ան նշամարտութեան կողմնակից է եւ ան է որ յաղթանակել պիտի տայ նշամարտութեան: Եթէ մարդիկ ֆեզ կ'ուտնակոյնն որպէսզի իրենք բարձրանամ՝ դատդ յանձնէն Բարձրեալ Յիսուսին եւ ան ֆեզ պիտի բարձրացնէ դէպի բարձունքները երկնային: Դատդ յանձնէն Յիսուսի՝ եւ դուն յաղթող պիտի ըլլաս յաւիտեան:

#### ԱՌՈՋՔ ՄԵՐ ԱՇԳԻՆ ՅԱՍԱՐ

Յիշէ՛, Տէ՛ր, մեր ամրող ազգը՝ բու փոքրիկ հօտդ, բոլորը, ուր ալ ըլլան, մեծերն ու փոքրիկները, այրերն ու կիները, եւ օգնութեան հասիր բոլորին՝ բու մեծ ողորմութեամբ:

Շնորհէ՛, որ բոլորն ալ ապրին սիրով եւ խաղաղութեամբ, Լուսաւորչաւանդ հաւատքով եւ առաքինի գործերով, ապահով կեանքով ու բարի կենցաղավարութեամբ: Ամէնուն ձեռնուու եւ օգնութեան եղի՛ր միշտ, բնացած՝ թէ արքնցած ատեն, տան՝ թէ նամրուն մէջ, ծովու՝ թէ ցամաքի վրայ, առած՝ թէ տուած ատեն, հանգիստի՝ թէ աշխատանքի պահուն: Անոնց օգտառատ եւ մեղքէ հեռու գործերը յաշողէ՛ եւ դէպի բարին առաջնորդէ՛: Ամէն: